## ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

# ԻՍԱՀԱԿ ԼԱԼԱՅԱՆՑ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

*Իսահակ Քրիստափորի Լալայանցը (1870—1933) լենինյան գվարդիայի նշանավոր ներկայացուցիչներից մեկն է։ Նա ծնվել է 1870 թ. հուլիսի 24-ին, Թերեքի մարզի Ղզլար քաղաքում։ Հայրը ապրում էր Ղզլարում և զբաղվում էր այգեգործությամբ։ Պատանի Իսահակը նախնական կրթությունն ստանում է Ղզլարում հայոց լեզվով։ Ծնողների մահից հետո նա փոխադրվում է Թիֆլիս, որտեղ աշխատում էին երեք եղբայրները՝ Իվանը, Նիկոլայը և Գերասիմը։*



*1882 թ. Լալայանցը սովորում է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում[1]։ 1884 թ. եղբոր՝ Նիկոլայի Կազան աշխատանքի փոխադրվելու կապակցությամբ Իսահակն էլ գնում է Կազան, որտեղ շարունակում է ուսումը ռեալական ուսումնարանում[2]։*

*1886 թ. Իսահակը, որպես գիշերօթիկ-ճաշորդ («նախլերնիկ») ապրում է մի բնակարանում, որտեղ նույն պայմաններով ապրում էր նաև Կազանի № 1 գիմնազիայի աշակերտ Ն. Ե. Ֆեդոսեևը, որը մի «մեծ շնորհքով օժտրված, կրակոտ երիտասարդ էր», — գրել է Ի. Լալայանցը։ Ն. Ե. Ֆեդոսեևն է, որ, ինչպես գրում է Լալայանցը, նրա մեջ առաջին անգամ հետաքրքրություն է առաջ բերել դեպի քաղաքական հարցերը[3]։*

*Կազանի ռեալական ուսումնարանում սովորելու տարիներին Ի. Լալայանցը զբաղվում էր նաև ինքնակրթությամբ, ծանոթանում էր մարքսիստական-սոցիալ-դեմոկրատական հայացքներին, սովորում օտար լեզուներ։ Ֆեդոսեևի հետ մտերմանալով, Լալայանցը ներգրավվում է ընդհատակյա գործունեության մեջ։ «Մեզ անծանոթ չէին «Կապիտալի» առաջին հատորը,— գրել է նա հետագայում այդ մասին,— Էնգելսը, Կաուցկին»[4]։ 1889 թ. ոստիկանությունը ձերբակալում է Ֆեդոսեևին և նրա շատ համախոհների։ Բանտ է ընկնում նաև*

---

1 *Մոսկվայի ԿՊՊԱ, ԴՊ, 7, 1900, № 234, մ. 13, թ. 2, 3, 4։*

2 *Լենինգրադի Մարզային պարտ. արխիվ, ֆ. 253/49, ց. 1, գ. 56, թ. 889, 427։*

3 *ՀՍԿՊԱ, ֆ. 619 Գ, գ. 1651, թ. 3։*

4 «Федосеев Николай Евграфович» (сборник), М.—Л., 1923, էջ 28։

Լալայանցը, սակայն միայն մեկ օրով։ Նրան հաջողվում է «թեթև պրծնել», արտաքսվել Կազանից։ Լալայանցը մեկնում է Նիժնի Նովգորոդ, կապվում բանվորական ընդհատակյա խմբակների հետ։

1890 թ. Ի. Լալայանցը կանչվում է զինվորական ծառայության և ուղարկվում Կովկաս։ Նա ծառայում է որպես հրետանու կրտսեր ենթասպա։

Երկու տարուց ավելի ծառայելով Թիֆլիսում, Լալայանցը կապեր է հաստատում քաղաքի ընդհատակյա գործիչների հետ։ Վերջերս հայտնաբերված արխիվային նյութերը վկայում են Լալայանցի գործունեության մի քանի կարևոր և մեծ հետաքրքրություն ներկայացնող կողմերի մասին։ Կազանի նահանգային ժանդարմական վարչության պետի 1893 թ. հունվարի 17-ի զեկուցագրից երևում է, որ Իսահակ Լալայանցը Թիֆլիսից կապեր է հաստատել Շտուտգարդի մարքսիստական գրականության հրատարակչության (Դիտցի) հետ, 1892 թ. գարնանը ստացել է Մարքսի և Էնգելսի գրքերից։ Զեկուցագրում ասված է, որ Իսահակը Դիտցի հետ կապվել է իր ավագ եղբոր՝ Իվան Լալայանցի միջոցով։ Իսահակը ցուցմունք է տվել, որ Իվան Լալայանցը (Թիֆլիսի առևտրական բանկի տնտեսագետ) «մի քանի անգամ օգտվել է Դիտցի հրատարակչությունից, Շտուտգարդից ստացել է գերմաներեն դանադան գրքեր, որոնք թարգմանել է հայերեն»[5]։ Այդ հարցի հետագա ուսումնասիրությունը կարող է նոր, կարևոր փաստեր հայտնաբերել Կովկասում մարքսիզմի տարածման մասին։ Համենայն դեպս, կասկածից դուրս է, որ Իսահակ Լալայանցը Թիֆլիսում 1892 թ. Շտուտգարդից ստացել է Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը» և այլ գրքեր։ Այնուհետև, ինչպես ժանդարմական քննիչներին տված ցուցումների մեջ խոստովանել է Իսահակ Լալայանցը, նա «Թիֆլիսի ծանոթներից մեկի (անունը չի ասում—Ա. Մ.) որոշ օգնությամբ թարգմանում է «Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը»[6] (Կաուցկու շարադրությամբ) աշխատությունը։

Կազանի դատական պալատի դատախազը, քննելով Իսահակ Լալայանցի ընդհատակյա գործունեությունը, լիովին հաստատել է ժանդարմական վարչության տվյալները։ Դեռ ավելին, նա էլ իր հերթին ցարական մինիստրին ներկայացրած զեկուցագրի մեջ ավելացնում է, որ Լալայանցը, Թիֆլիսում եղած ժամանակ, իր եղբոր խորհրդով դիմել է Դիտցի հրատարակչությանը և նրանից ստացել Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գիրքը, որը գրված է եղել «Վաճառականական գործի ինքնուսույց» վերնագիրը կրող կազմի մեջ[7]։

Այդ տեղեկությունները ցույց են տալիս, որ Անդրկովկասում, հայ իրականության մեջ Մարքսի և Էնգելսի առանձին աշխատությունները ստացվում էին դեռևս 1890-ական թթ. սկզբներին, և այդ գործում կարևոր դեր է կատարել Իսահակ Լալայանցը։

1892 թ. կեսերին Ի. Լալայանցը ավարտում է զինվորական ծառայությունը և մեկնում նախ Նիժնի Նովգորոդ և ապա դարձյալ Կազան, անասնաբուժական ինստիտուտ ընդունվելու մտադրությամբ։ Կազանում Լալայանցը շարունակում է հեղափոխական աշխատանքը, ստեղծում նոր կապեր։ Այստեղ նա

5 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. ԴՊ, 7, 1892, գ. 237, հատ. 2, թ. 325։
6 Նույն տեղում։
7 Լենինգրադի ԿՊՊԱ, ֆ. 1405, ց. 93, 1892, գ. 10600, թ. 37։

ավարտում է Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքի թարգմանությունը գերմաներենից ռուսերեն, շարունակում է զբաղվել ինքնակրթությամբ և պրոպագանդիստական գործունեությամբ, ձեռնարկում է Մարքսի և Էնգելսի նաև ուրիշ երկերի թարգմանություններ։ Սակայն երիտասարդ մարքսիստի գործունեությունը չի վրիպում ժանդարմական դրածակալների խուզարկու աչքերից։

1893 թ. նոր տարվա օրը ժանդարմները խուզարկում են Ի. Լալայանցի բնակարանը, իսկ հունվարի 2-ին արդեն Լալայանցը նստած էր Կազանի բանտի մի խցիկում։ Նրա բնակարանից բռնագրավված նյութերի մեջ էին՝ «Իսահակ Լալայանցի գրած 13 կետերից կազմված մի ծրագիր, հանցավոր բովանդակությամբ», «Հեղափոխական ռեֆերատ», որը խոսում է «հեղափոխական պրոպագանդի մասին»[8], 5 տետրեր Լալայանցի ձեռագրով, որոնք պարունակում էին Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը» գրքի ռուսերեն թարգմանությունը, Վիլհելմ Լիբկնեխտի ճառերի Լալայանցի ռուսերեն թարգմանության երկու տետրակ, «Կրկնակի հաշվապահության պարզ ինքնուսույց» վերնագիրը կրող դիրքը, որի կազմի մեջ դրված էր Էնգելսի «Ընտանիքի... ծագումը» աշխատությունը, որն, ինչպես նշել է ժանդարմական գնդապետը «արգելված է Ռուսաստանում օգտագործել»։ Ժանդարմների վերցրած ավարը մեջ էր նաև Ի. Լալայանցի ծոցատետրը՝ զանազան նշումներով և հասցեներով։ Այսպես, Իսահակ Լալայանցը երկրորդ անգամ բանտ ընկավ, ուր մնաց մինչև փետրվարի վերջերը, այնուհետև նրան ազատ արձակեցին՝ մինչև դատական պրոցեսը ոստիկանական հսկողության տակ պահելով և արտաքսելով Կազանից, արգելելով բնակվելու Մոսկվա, Պետերբուրգ, Սարատով, Նիժնի, Թիֆլիս, Բաքու և այլ կենտրոնական քաղաքներում։

Սոցիալ-դեմոկրատ ընկերների խորհրդով. Լալայանցը որոշում է գնալ Սամարա։ Բայց ո՞ւմ մոտ, ինչպե՞ս ստեղծել այնտեղ աշխատելու պայմաններ։ 22 տարեկան մարքսիստը Կազանի բարեկամներից վերցնում է մի քանի հասցեներ, ստանում անձնագիր և մեկնում Սամարա։ Իր ունեցած հասցեներով այստեղ նա այցելում է Դոլգովին, որը նարոդովոլեց էր։ Նա Լալայանցին ընդունում է «շատ սրտաբաց ու սիրալիր»։ Հին նարոդովոլեց ծերունին կարծես կենդանություն ստացած, աշխույժ զրուցում էր Լալայանցի հետ, նրան պատմում Սամարայի մասին և հարցնում Կազանի կյանքից. երբ, ինչպես պատմում է Լալայանցը, ներս է մտնում «ոչ-բարձրահասակ, բայց շատ ամրակազմ. հատկապես բեղերի ու մորուքի մեջ չիկակարմրին տվող խարտյաշ մազերով, 22—23 տարեկան մի երիտասարդ»։

Արտակարգ խելացի ու խորապես համակրելի դեմքով երիտասարդը Վլադիմիր Ռլյիչ Ուլյանովն էր։ Ընդհանուր զրույցից հետո, քիչ անց, հրաժեշտ տալով Դոլգովին, Վլադիմիր Ուլյանովն ու Լալայանցը դուրս են գալիս։ «Ճանապարհին մեր միջև սկսվեց մի հետաքրքիր խոսակցություն,— պատմում է Լալայանցը,— որը մեզ հնարավորություն տվեց ավելի մոտիկից ծանոթանալու իրար հետ... Մեր զրույցը, բնականաբար, անցավ նարոդնիկներին ու մարքսիստներին վերաբերող թեմային, և մենք երկուսս էլ այնքան տարվեցինք, որ չնկատեցինք, թե ինչպես հասանք նրա բնակարանին, և քանի որ դա զրույցի ամենահետաքրքիր տեղն էր, ապա Վլադիմիր Ռլյիչը ասաց, որ ինձ «մի փոքր»

8 Մոսկվայի ԿԳԳԱ, ֆ. ԴԳ. 7, 1892, գ. 237, հատ. 2, թ. 323։

եռ կուղեկցի։ Աննկատելիորեն հասնելով իմ բնակարանին, ես իմ հերթին առաջարկեցի նույն բանը... Եվ ահա այդպես, ամեն անգամ իրար «էլի մի քիչ» ուղեկցելով, մենք նորից չորս պտույտ գործեցինք։ Վերջապես, որոշեցինք, որ միևնույն է՝ ամբողջ նյութը մենք չենք սպառի, և ճանապարհի կեսին, ամուր սեղմելով իրար ձեռք, գնացինք մեր տները, պայմանավորվելով, որ հաջորդ երեկոյան նա ինձ կտանի ծանոթացնելու ինչ-որ հասարակության և, ամենից առաջ իր մտերիմ ընկերոջ՝ Ա. Վ. Պոպովի (Ա. Պ. Սկլյարենկո) հետ»[9]։

Երիտասարդ մարքսիստ Վլադիմիր Ուլյանովը ուժեղ տպավորություն թողեց հասակակից Լալայանցի վրա։ «23-ամյա մարդու մեջ,— գրել է Իսահակը,— ամենազարմանալի կերպով զուգակցվում էին, մի կողմից, պարզությունը, նրբազգացությունը, կենսուրախությունն ու կրքոտությունը, և մյուս կողմից՝ մեծալրջությունը, գիտելիքների խորությունը, տրամաբանական անողոք հետևողականությունը, դատողության ու սահմանումների պարզորոշությունն ու հստակությունը»[10]։ Այդպես սկսվեց առաջին հայ մարքսիստի ծանոթությունը Վլադիմիր Ուլյանովի հետ, սկսվեց նրանց բարեկամությունն ու ընկերությունը, նրանց համատեղ գործունեությունը նոր տիպի մարքսիստական կուսակցության ստեղծման համար ծավալվող պայքարում։

Ի. Լալայանցը Վ. Ի. Լենինի հետ ծանոթանալու հաջորդ օրը այցելեց նրա ընտանիքին, ծանոթացավ մոր՝ Մարիա Ալեքսանդրովնայի և քույրերի՝ Աննայի ու նրա ամուսին Մ. Ելիզարովի և Մարիա Իլյինիչնայի ու եղբոր՝ Դմիտրի Իլյիչի հետ, այնուհետև Լենինի ընկերոջ՝ Ալեքսեյ Սկլյարենկոյի հետ։ Լենինի, Լալայանցի և Սկլյարենկոյի միջև կար հայացքների լիակատար համերաշխություն։ 1893 թ. ձմեռը ձևավորվեց հեղափոխական մարքսիստների «Սամարայի եռյակը», որը պրոպագանդիստական ու կազմակերպական գործունեություն ծավալեց Սամարայում մարքսիզմի տարածման և սոցիալ-դեմոկրատական խմբակների ստեղծման ուղղությամբ։ «Սամարայի եռյակը», «իրար հետ չափազանց մերձեցած համախոհ ընկերների» այդ խումբը հանդիսացավ ապագա լենինյան կուսակցության առաջին բջիջներից մեկը։ Այդ խմբակում Վ. Ի. Լենինի, Ի. Խ. Լալայանցի և Ա. Պ. Սկլյարենկոյի գործունեությունը կուսակցության կառուցման համար մղված պայքարի հնագույն էջերից մեկն է[11]։

1894 թ. մայիսի 24-ին Սամարայում Լալայանցի և Սկլյարենկոյի մոտ եկան ժանդարմները։ Վ. Ի. Ուլյանովը մեկնել էր Պետերբուրգ։ Լալայանցը և Սկլյարենկոն ձերբակալվեցին։ Լալայանցը Կազանի խմբակի գործով դատապարտվեց 10 ամսվա բանտարկության՝ մենախցում։ Նրան ուղարկեցին Պետերբուրգի «Կրեստի» բանտը։ Իմանալով այդ մասին, Վ. Ի. Ուլյանովը անտարբեր չմնաց դեպի փորձության մեջ ընկած ընկերը։ Շուտով բանտում Լալայանցին տեսակցության եկավ նրա «հարսնացուն»՝ Օլգա Զաչինան, որին Լենինն էր ուղարկել։ Առաջին տեսակցությունը, երկրորդը, և այդպես, Վլադիմիր Ուլյանովը բանտային խցիկում նստած Լալայանցին ուղարկում էր գրքեր, նորություններ, հույս ու հավատ։

9 Ի. Լ ա լ ա յ ա ն ց, 1893—1900 թվականների ընթացքում Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումներիս մասին (հուշեր)։

10 Նույն տեղում։

11 Այդ մասին մանրամասն տեղեկություններ կան Ս. Ա. Գրիբանովայի «Մարքսիստական խմբակները Սամարայում XIX դարի 90-ական թվականներին» թեկնածուական դիսերտացիայում (Լենինգրադի համալսարան), 1954։

Բանտարկության ժամկետը լրանալուց հետո Լալայանցն ազատ արձակվեց և իսկույն մեկնեց Վասիլևսկի Օստրով, Զաչինայի մոտ։ Այստեղ նա հանդիպում է Վլադիմիր Ուլյանովին։

Լալայանցին արգելված էր ապրել մայրաքաղաքներում, նրա համար «ընտրել էին» այս անգամ Պենզան, ուր պետք է մեկներ Պետերբուրգից։

Պենզա մեկնելուց առաջ Պետերբուրգում Լալայանցը և Լենինը քննում են առաջիկա անելիքների պլանը։ Լալայանցը Պետերբուրգից մեկնեց Մոսկվա Վ. Ի. Լենինի հետ միասին։ Ամբողջ ճանապարհին գնացքում ընկերները զրուցում էին իրենց հուզող հարցերի մասին։ Լալայանցն իր գրվածքների մեջ ընդգծել է, որ հենց այդ ժամանակ էլ «ինձ համար բավականին պարզությամբ սկսեց ուրվագծվել Վլադիմիր Իլյիչի ակտիվ և ղեկավար դերը այդ բոլոր աշխատանքներում»։ Գնացքը երկու բարեկամներին հասցրեց Մոսկվա։ Այստեղ Լալայանցը կանգ առավ Ուլյանովների հյուրընկալ բնակարանում, Լենինի հետ միասին շրջապատվեց նրա հարազատների հոգատարությամբ։ Վ. Ի. Լենինը պատրաստվում էր մեկնել արտասահման կապեր հաստատելու «Աշխատանքի ազատագրության» խմբակի հետ։ Լալայանցի Պենզա մեկնելու օրը երիտասարդ մարքսիստները բաժանվեցին մեկը դեպի Պենզա, մյուսը՝ Պետերբուրգ մեկնելու համար։ Մինչդեռ Լալայանցը կհասներ Պենզա և կրնտելանար տեղական կյանքին, Լենինն արդեն մեկնել էր Ժնև, Պլեխանովի հետ ունեցել առաջին հանդիպումը, քննել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական շարժման ասոաջնահերթ խնդիրները։

Պենզան խիստ նեղ թվաց Ի. Լալայանցի հեղափոխական գործունեության համար։ Սկսվեցին նրա ջանքերը Եկատերինասլավ մեկնելու համար։ Դիմումներ են ուղղվում ներքին գործոց մինիստրին։ 1895 թ. սեպտեմբերի սկզբներին Վ. Ի. Լենինն արդեն վերադարձել էր արտասահմանից, այցելել Մոսկվա։ Լենինը հետաքրքրվել էր Լալայանցով, քրոջ ամուսնու՝ Ելիզարովի միջոցով նրան ուղարկել նամակ և այն ժողովածուն, որում զետեղված էր Տուլինի հոդվածը և որի պատճառով տիրաժը բռնագրավվել է հենց տպարանից։ Լալայանցի համար Վ. Ի. Լենինից ստացած նամակը և թանկագին նվերը՝ դիրքը, ոգեշնչման նոր աղբյուր հանդիսացան, նրա առջև կուտակված մշուշը մի պահ ցրվեց։

Լալայանցն անմիջապես գաղտնի մեկնեց Մոսկվա, և նորից ջերմորեն հանդիպեցին գաղափարակից բարեկամները։ Լենինը և Լալայանցը քննում են Լալայանցին Հարավային Ռուսիա փոխադրելու պլանը։ Ինչպես վկայում է Լալայանցը, Լենինը տեղյակ էր հարավում բանվորական շարժման վիճակին. նա գիտեր, որ Եկատերինասլավում կազմակերպությունը մեծ փորձության էր ենթարկվել, ձախողվել, շատ գործիչներ բանտ էին նետվել, հարկավոր էր վերսկսել գործը։ Լալայանցի հետ միասին Եկատերինասլավ գնալու նախապատրաստություն էր տեսել նաև երիտասարդ մարքսիստ Պրասկովյա Իվանովնա Ելշինան. Լալայանցի հարսնացուն և մարտական ընկերուհին։ Պ. Ի. Ելշինան գրել է, որ մեկնելուց առաջ Լալայանցը «Մոսկվայում հանդիպում ունեցավ Վլադիմիր Իլյիչ Լենինի հետ»[12]։

Երիտասարդ զույգը հասավ Եկատերինասլավ։ Նրանց ետևից Եկատերինասլավի նահանգապետը հանձնարարական գրություն ուղարկեց ժանդարմա-

12 Դնեպրոպետրովսկի մարզային պետարխիվ. «Զարյա» թերթի ֆոնդը 13—6, № 137 (փաստաթղթի բնագիրը գրված է ուկրաիներեն և թարգմանվել է մեր խնդրանքով)։

կան վարչության։ Գրության մեջ ասված էր, որ պահեստի հրետանու ենթասպա Իսահակ Խրիստաֆորի Լալայանցը, որը երեք տարի պետք է գտնվի հսկողության տակ, փոխադրվել է Եկատերինասլավ ապրելու, ուստի «սույնով հանձնարարվում է Եկատերինասլավի ոստիկանապետին, Լալայանցի ժամանելուն պես, նրան վերցնել բացահայտ հսկողության տակ, վերևում սահմանված ժամանակամիջոցում...»[13]։ Լալայանցին ներկայացավ ոստիկանական հսկիչը։ Թեև բացահայտ հսկողության տակ էր, բայց նա սկսում է գործը, համախմբում է մարքսիստների փոքրիկ խումբ, հսկիչի աչքից ծածուկ կապեր է հաստատում, գրականություն ստանում և տարածում։

1895 թ. դեկտեմբերն էր։ Լալայանցը ստացավ ցավալի լուր. Պետերբուրգում «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը» մեծ փորձության էր ենթարկվել, բանտարկվել էին Վ. Ի. Լենինը և նրա շատ զինակիցներ։ Բայց պայքարը շարունակվում էր տեղերում Պետերբուրգի լենինյան «Միության» օրինակով կազմակերպություններ ստեղծելու համար։ Շուտով Պետերբուրգից Եկատերինասլավ եկավ Լենինի զինակից Իվան Բարուշկինը։ Այնտեղ էր գործում ռևոլյուցիոն գործիչ Յուրի Կուլյարկոն։ Ստեղծվում է Եկատերինասլավի մարքսիստական խմբակների ղեկավար կորիզ, գրվում են թռուցիկներ, գործում են խմբակները, աշխույժ հեղափոխական աշխատանք է ծավալվում բանվորների մեջ։ Այստեղ էլ Ի. Լալայանցն ամուսնանում է Պրասկովյա Ելշինայի հետ (այսուհետև Պ. Ի. Լալայանց)։

1897 թ. կեսերին տարբեր խմբակների ներկայացուցիչները միավորում են բոլոր խմբակները և կոչում Եկատերինասլավի «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություն», որի գլխավոր ղեկավարներն էին Ի. Խ. Լալայանցը, Ի. Բարուշկինը, Մ. Ցխակայան և ուրիշներ։ Նրանք կապվում են Կիևի, Խարկովի, Մոսկվայի, Պետերբուրգի և այլ մարքսիստական խմբակների հետ, եռանդուն աշխատանք սկսում պարտիայի համագումար նախապատրաստելու համար։

1898 թ. մարտն էր։ Պետք էր ընտրել պատգամավոր համագումարի համար։ Ընտրել Լալայանցին, այդ նշանակում էր նրա վրա բացահայտ հսկող ոստիկանին տանել Մինսկ, ուղիղ համագումարի շենքը։ Համագումար ուղարկվեց Կ. Ա. Պետրուսովիչը։ Տեղում ընդհատակյա կյանքը եռում էր։ Համագումարից վերադառնալով, պատգամավորը եկավ Լալայանցի բնակարանը, նրան զեկուցեց ՌՍԴԲԿ հռչակելու, նրա մանիֆեստի, կենտկոմի և այլ հարցերի մասին։ Կես ժամ անց Պետրուսովիչը ձերբակալվեց։ Ժանդարմները ներխուժեցին և Լալայանցի բնակարանը, սակայն... «ոչինչ հանցավոր բան չգտան»։ Մի քանի օր անց, քաղաքից դուրս, դաշտում գումարվեց Եկատերինասլավի սոցիալ-դեմոկրատական խմբակների անդամների գաղտնի ժողովը, որտեղ ՌՍԴԲԿ I համագումարի մասին զեկուցում տվեց Եկատերինասլավի կոմիտեի անդամ Ի. Լալայանցը։ Հրապարակվեց ՌՍԴԲԿ I համագումարի մանիֆեստը, որի «ընթերցումից հետո հավաքվածներն իրենց հայտարարեցին ՌՍԴԲԿ Եկատերինասլավի կոմիտե»[14]։ Կոմիտեի կազմի մեջ մտան Ի. Լալայանցը, Ի. Բարուշկինը, Մ. Ցխակայան, Ա. Կուլաղինը, Պ. Լալայանցը և ուրիշներ[15]։

13 Նույն տեղում, ֆ. 9, գ. 249, թ. 371։

14 Տե՛ս Մ. Նովոսելով, Բարուշկին, Մ., 1954 (ռուս.), էջ 176։

15 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ, ԴՊ, 00, 1898 թ., № 5, մաս 54, թ. 72—75։

Շուտով լրացավ Լալայանցի նկատմամբ «բացահայտ հսկողության ժամկետը», Լալայանցն իսկույն անհայտացավ Եկատերինասլավից։

Ժանդարմական կորպուսն ամենուրեք հրահանգ տվեց հետևել, գտնել Լալայանցին և նրա վրա հաստատել «գաղտնի հսկողություն»։ 1898 թ. հունիսի 30-ին Թիֆլիսի ոստիկանապետն ստացավ գրություն այն մասին, որ Իսահակ Լալայանցը «ներկայումս ապրում է Թիֆլիս քաղաքում» և խնդրվում է որոնել նրան ու նրա վրա սահմանել «անհրաժեշտ հսկողություն»[16]։

1898 թ. երկրորդ կեսին և 1899 թ. Լալայանցը ապրում էր Թիֆլիսում. Թիֆլիսից 1899 թ. վերջերին Լալայանցը անցնում է Վորոնեժ և ապա Եկատերինասլավ, վերսկսելով իր ղեկավար մասնակցությունը ՌՍԴԲԿ տեղական կոմիտեի աշխատանքին։ «Ինչպես հաստատվել է հարցաքննությամբ,— գրված է ժանդարմական մի փաստաթղթում,— Լալայանցը եղել է կոմիտեի անդամներից մեկը և աչքի ընկնող տեղ է գրավել բանվորական խմբակներ կազմակերպելու և անլեգալ գրականություն մատակարարելու գծով»[17]։

1899 թ. վերջերին Ի. Լալայանցը և Եկատերինասլավի կոմիտեի ուրիշ անդամներ կազմակերպում են «Южный рабочий» մարքսիստական թերթը։ Լալայանցը դառնում է նրա խմբագիրներից մեկը։ «Յուժնի ռաբոչի» թերթի № 1-ը լույս տեսավ 1900 թ. հունվարին, երբ Վ. Ի. Լենինը ազատվեց սիբիրյան աքսորից, 300 կիլոմետր ձիով ու ոտքով անցնելով, ուղևորվեց դեպի Մոսկվա, հարազատների մոտ։

1923 թ. հրատարակված «Եկատերինասլավի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության պատմություն» գրքում զետեղված է Ի. Խ. Լալայանցի պորտրեն, որի տակ դրված մակագրությամբ Ի. Խ. Լալայանցը բնութագրվել է որպես Եկատերինասլավի «առաջին սոցիալ-դեմոկրատական կոմիտեի գաղափարական ղեկավար և «Յուժնի ռաբոչի» թերթի գլխավոր հիմնադիրներից մեկը»։

Թերթի առաջին համարում տպված հոդվածում Ի. Խ. Լալայանցը, շարադրելով բանվոր դասակարգի վիճակը և ցարական կառավարության հանցագործությունները, նշում է, որ այդ կառավարության տապալումով հնարավոր կլինի աշխատավորներին փրկել շահագործումից. «Այդ խնդրի կատարման համար բանվոր դասակարգի մասնատված ուժերն անբավարար են։ Անհրաժեշտ է այդ բոլոր ուժերը միավորել մեկ կուռ, միասնական, մեկ բանվորական բանակի մեջ, մեկ ընդհանուր նպատակի ուղղված պայքարի միասնական եղանակներով։ Անհրաժեշտ է Համառուսաստանյան բանվորական կուսակցություն, որը կմիավորի բանվորների առանձին ձգտումները և դրանք կուղղի դեպի գիտակցական պայքար միևնույն խնդիրների համար»[18]։

Լալայանցի, Խարչենկոյի, Մաշեցկու, Նաումովի, Ցխակայայի և Եկատերինասլավի կոմիտեի մյուս ղեկավար գործիչների մոտ միտք է ծագում հրավիրել ՌՍԴԲԿ II համագումար, I համագումարի սկսած, բայց կիսատ մնացած գործը մինչև վերջ հասցնելու համար։ Կոմիտեի անդամները մեկնում են այլ քաղաքներ, տպում և տարածում են «Յուժնի ռաբոչի» թերթը, թռուցիկներ, ագիտացիա են ծավալում համագումարի օգտին։

16 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 7, 1898 թ., գ. 205, թ. 84։
17 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. ԴՊ, 7, 1900, գ. 234, մաս 13, թ. 1ա։
18 Տե՛ս «Южный рабочий» թերթը, 1900, № 1։

Այդ աշխատանքը ոստիկանների աչքից աննկատելի չմնաց։ Ոստիկանական դեպարտամենտի 1900 թ. ձմռանը գրված զեկուցագրերից մեկում նշված է, որ «Եկատերինասլավի տպագրական խմբի մեջ առավել աչքի ընկնող դիրք է գրավում Իսահակ Լալայանցը...»[19]։ Այնուհետև զեկուցագրում ասված է, որ հատուկ ուշադրության են արժանի Լալայանցի այցելությունները Եկատերինասլավից Պոլտավա, Խարկով, Վիտեբսկ, Դվինսկ, Կրեմենչուգ, «գործնական հեղափոխական կապերի նպատակով»։ Տեղական կոմիտեներն ամենուրեք համերաշխություն էին հայտնում ՌՍԴԲԿ նոր համագումար հրավիրելու համար սկսված կամպանիային։

1900 թ. մարտի կեսերին որոշվեց Մոսկվա ուղարկել Իսահակ Լալայանցին, աքսորից վերադարձած Լենինին տեսնելու, նրա հետ խորհրդակցելու ՌՍԴԲԿ II համագումար հրավիրելու գծով սկսված աշխատանքների մասին։ «Ես գնացի Մոսկվա, ուղիղ Ուլյանովների տունը,— գրել է Ի. Լալայանցը,— Վլադիմիր Իլյիչին ես գտա տանը հարազատների մոտ։ Այդ օրերին նա ապրում էր Մոսկվայում, իր ընտանիքում...»[20]։ Հինգ տարվա բաժանումից հետո Լալայանցը և Լենինը նորից միասին էին, խոսում, քննում էին իրենց հետաքրքրող հարցերը։ «Երկու օրը, որ ես անցկացրի Ուլյանովի բնակարանում,— գրել է Լալայանցը,— ինձ համար անցան բոլորովին աննկատելիորեն»։

Վ. Ի. Լենինը լսում է Ի. Խ. Լալայանցի ինֆորմացիան Հարավում սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքի մասին, ծանոթանում է Լալայանցի ղեկավարությամբ կազմված «Համագումարի մասին կանոնադրության»-ը («Ստատուտ»), խորամուխ է լինում առաջ քաշված հարցի մեջ[21]։ Վ. Ի. Լենինը բացատրում է Լալայանցին, որ մինչև կուսակցության նոր համագումարի հրավիրումը անհրաժեշտ է երկարատև նախապատրաստական աշխատանք կատարել, մշակելու համար ծրագրային, տակտիկական և կազմակերպական այն հիմնական սկզբունքները, որոնց վրա պետք է կառուցվի կուսակցությունը, որ համագումարով ոչ թե պետք է սկսել կուսակցության վերականգնումը, այլ դրանով ավարտել այն[22]։ Եվ, վերջապես, Լենինը գտնում է, որ ՌՍԴԲԿ նոր համագումարը պետք է հրավիրել ոչ թե Ռուսաստանում, այլ արտասահմանում, առաջին համագումարի բախտին չարժանանալու համար։

Զինված Վ. Ի. Լենինի ցուցումներով, Ի. Խ. Լալայանցը վերադարձավ Եկատերինասլավ։ Բանից պարզվեց, որ ներքին գործերի մինիստրի հրամանով Մոսկվայի ժանդարմական շեֆ Զուրատովն իր առավել հմուտ մարդկանց նետել էր Եկատերինասլավ, որսալու Վ. Ի. Ուլյանովի կողմնակիցներին։ 1900 թ. ապրիլի 16-ի գիշերը ժանդարմական բանդան ձերբակալում է Եկատերինասլավի կոմիտեի բոլոր ակտիվ գործիչներին՝ 78 մարդու։ Ցուցակն սկսվում է Լալայանցով[23], այնուհետև 2-րդը՝ Ցխակայա Միխայիլ Գրիգորևիչ, հետո՝ Կուլագին, Մաշեցկի, Տիխոմիրով, Վիլենսկի, Լալայանց Պրասկովյա և ուրիշներ։ Ի. Խ. Լալայանցը ուղարկվում է նախ Կիև՝ «Լուկյանովկա» բանտը, այնտեղից

19 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 201, 7, ԴՊ, 1900 թ., գ. 234, թ. 40—41։
20 Տե՛ս «Պրոլետարսկայա ռևոլյուցիա» ամսագիրը, 1929, № 1 (84)։
21 Վ. Ի. Լենին, Կենսագրություն, 1960, էջ 77։
22 Տե՛ս Ի. Լալայանցի հուշագրությունները, «Բոլշևիկմի ակունքների մոտ», էջ 59—60։
23 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. ԴՊ, 7, գ. 234, 1900, թերթ 12—16։

Շուտով Մոսկվա, տխրահռչակ «Տագանկա»՝ մտքի ու խղճի սպանդանոցը։ Երկու տարի Լալայանցը տառապում էր բանտային խցիկներում։

Արտասահման տարագրության գնալը Վ. Ի. Լենինին փրկեց։ Հեռավոր Եվրոպայից Լենինը հետաքրքրվում էր մարտական ընկերների ճակատագրով, օգնում և ուղղություն էր տալիս նրանց գործունեությանը։ 1901 թ. փետրվարին Մյունխենից մորը գրած նամակում Վլ. Ուլյանովը հետաքրքրվում է «Խեղճ Կոլումբով»[24] (Լալայանցով)։ Գիտենալով բանտում Լալայանցի կրած տառապանքների մասին, Լենինը հարցնում է. «Առո՞ղջ է արդյոք նա։... Պատրաստվում եմ գրել նրան...»[25]։

1902 թ. մարտին, դեռևս մինչև դատական պրոցեսը, Լալայանցն Ուրիցկու և ուրիշների հետ միասին էտապով ուղարկվում է Արևելյան Սիբիր, հեռավոր Բալագանի գավառը։ Շուտով տեղի ունեցավ դատավարությունը և Լալայանցը իր բացակայությամբ դատապարտվեց 5 տարի աքսորի՝ Արևելյան Սիբիրում։ Սակայն հինգ ամիս էլ ոստիկաններին չհաջողվեց Լալայանցին պահել Սիբիրում։ Լալայանցին ձգում էր պրոֆեսիոնալ-կուսակցականի աշխատանքը, նա ձգտում էր դուրս պրծնել կապանքներից, գնալ Լենինի մոտ։ Կոնսպիրատիվ ջանքեր, անձնագիր, վտանգի նոր փորձություններ, հաջող փախուստ աքսորավայրից և նորից Սամարա, հանդիպումներ Լենինի քրոջ՝ Մարիա Իլյինիչնայի հետ, այնուհետև Սարատով, մարտական ընկերուհու՝ Պրասկովյա Լալայանցի հետ գաղտնի ճանապարհորդություն Ռուսաստանում, սահմանը անցնելու փորձեր, անհաջողություններ, վերստին փորձեր, և ահա Լալայանցը սահմանի այն կողմում է, ազատության մեջ, իսկ ժանդարմական կորպուսը նրան շղթայելու մեղադրական հոդվածներ է ձևակերպում։

Իսահակ և Պրասկովյա Լալայանցները անցնում են Պրուսիան, Քյոնիգսբերգով մեկնում Ռեոլին։ 1902 թ. օգոստոսի սկզբներին նա հասավ Ցյուրիխ, որտեղ գտնվում էր «Իսկրա»-ի խմբագիրներից մեկը՝ Ակսելրոդը։ Այստեղ է ժամանում և Պլեխանովը։ Նրանք ջերմ հանդիպում են ունենում Լալայանցի հետ։ Ակսելրոդը Լոնդոն ուղարկած մի նամակում հայտնում է Լենինին Լալայանցի ժամանելու մասին, ինչպես նաև այն մասին, որ Լալայանցի մոտ նկատվում է «ռուսաստանյան պրակտիցիզմի ոգի», որ նա «մի քանի դիտողություններ է անում «Իսկրա»-ի մասին իր և Ռուսաստանում գտնվող այլ ընկերների կողմից»[26]։

Վ. Ի. Լենինը իսկույն Ակսելրոդին պատասխան նամակ է գրում. «Թանկագին Պ. Բ. հենց այս րոպեին հեռագիր ստացա, որ Կոլումբը (Լալայանցը) Ձեզ մոտ է։ Հազար ողջույններ հին ընկերոջս։ Նամակ եմ կցում նրա համար[27]։ Նա հավանական է մի քիչ կհանգստանա Ձեզ մոտ, կընտելանա շրջապատին,— իսկ այնուհետև ուղիղ կգա մեզ մոտ...։ Լենին»[28]։

Իսահակ Լալայանցը մեկնեց Ժնև։ Շուտով «Իսկրա»-ի խմբագրությունը ամբողջովին փոխադրվեց այնտեղ, ուր ժամանեց նաև Վ. Ի. Լենինը (1903 թ. ապրիլին)։

---

24 Վ. Ի. Լենին, Նամակներ հարազատներին, Երևան, 1934, էջ 57։

25 Նույն տեղում։

26 Ակսելրոդի նամակի մասին տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 157։

27 Լենինի այդ նամակը, ինչպես նաև Լալայանցին գրված շատ ուրիշ նամակներ, դեռևս չեն հայտնաբերվել։

28 «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 155։

ՌՍԴԲԿ համագումարի նախօրյակին Ի. Լալայանցը եռանդուն աշխատանքով օգնում էր Վ. Ի. Լենինին կուսակցության ստեղծման համար նրա մղած մեծ պայքարում։ Վ. Ի. Լենինի առաջարկով Ի. Խ. Լալայանցը ընդունվեց Ռուսական հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան լիգայի անդամ, այնուհետև «Իսկրա»-ին օժանդակող խմբի անդամ, նշանակվեց «Իսկրա»-ի տպարանի վարիչ[29]։ Այստեղ Լալայանցը կատարում է Լենինի հանձնարարությունները, կազմակերպում է «Իսկրա»-ի և մարքսիստական գրականություն հրատարակելու գործը։ Լալայանցը գրել է առանձին բրոշյուր, որի մեջ նկարագրել է հեղափոխականներին Սիբիր քշելու պատմությունը։ Լենինը շտապեցնում էր այդ բրոշյուրի հրատարակումը։ 1902 թ. դեկտեմբերի 14-ին Լոնդոնից Գ. Պլեխանովին գրած նամակում Լենինը հարցնում է. «Ի՞նչ տեղեկություն կա Ժնևի հրատարակչությունից։ Վերջապես ե՞րբ լույս կտեսնի Լալայանցի բրոշյուրը»[30]։

Վ. Ի. Լենինը հանձնարարություններ էր տալիս Ի. Լալայանցին Կովկասի, մասնավորապես Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ կապված հարցերի վերաբերյալ։ Լոնդոնում գտնված ժամանակ, 1903 թ. հունվարի 28-ին Լենինը Կովկասից ստանալով հայ սոցիալ-դեմոկրատների միության օրգան «Պրոլետարիատ» թերթը, իսկույն այն ուղարկում է Ժնև՝ Պլեխանովին, հետևյալ նամակով. «Ուղարկում եմ Ձեզ սաս «Պրոլետարիատը»։ Բարի եղեք խնդրել Լալայանցին կամ որևէ մեկին՝ այդ թերթից ամբողջապես բաrգմանել այն բոլորը, ինչ վերաբերում է նացիոնալիզմին ու ֆեդերալիզմին և ՇՈՒՏԱՓՈՒՅԹ ուղարկել ինձ։ Հարկավոր է նրանց մասին անպայման հոդված գետեղել»[31]։

Լրացուցիչ տեղեկությունները հիմք են տալիս հաստատելու, որ Լենինի հանձնարարությունը կատարվել է Ի. Լալայանցի միջոցով։

ՌՍԴԲԿ II համագումարից անմիջապես հետո Վ. Ի. Լենինը, ժամանելով Ժնև, հաջորդ օրը այցելում է Լալայանցին։ Լենինը Լալայանցին պատմել է բոլշևիկյան և մենշևիկյան ֆրակցիաների առաջացման մասին, պառակտման և ներկուսակցական պայքարի և այլ կարևոր հարցերի մասին։ Լալայանցն ամբողջովին կանգնում է Լենինի կողմը և մասնակցում նրա մղած համառ պայքարին՝ ընդդեմ մենշևիկների, բունդականների և այլ հակալենինյան խմբերի։

ՌՍԴԲԿ արտասահմանյան լիգայի համագումարում, 1903 թ. հոկտեմբերի 13—18-ին Ի. Լալայանցը Լիտվինովի, Պոլետաևի, Բոնչ-Բրուևիչի, Պրասկովյա Իվանովնա Լալայանցի և ուրիշների հետ միասին հաստատուն կերպով կազմեցին լենինյանների ֆրակցիա և Լենինի գլխավորությամբ վճռական պայքար մղեցին Մարտովի, Պոտրեսովի, Տրոցկու, Դեյչի և ուրիշ կաղմալուծիչների դեմ[32]։

Լիգայի համագումարից հետո Վ. Ի. Լենինը Լալայանցին առաջարկեց մեկնել Ռուսաստան։ Լալայանցի համար անձնագիր ձեռք բերեց Բողդան Կնունյանցը։ Հոկտեմբերի 26-ին Ն. Կրուպսկայան Ռուսաստանում գտնվող Կենտկոմի բյուրոյին հայտնել է, թե «Պատրաստեցեք բնակարան և սապոգ-

29 Նույն տեղում, էջ 192։
30 Նույն տեղում, էջ 182։
31 Նույն տեղում, էջ 208։
32 Նույն տեղում, հատ. 7, էջ 64։

ներ (այսինքն փաստաթղթեր—Ա. Մ.) Լալայանցի համար»[33]։ Գալով Կիև, կենտկոմում զեկուցելով Լենինի հանձնարարությունների մասին, Լալայանցն անմիջապես որոնեց և գտավ Լենինի ընտանիքին. նա այցելեց Լենինի մորը՝ Մարիա Ալեքսանդրովնային, քրոջը՝ Աննա Իլյինիչնային և եղբորը՝ Դմիտրիին, հաղորդելով Վլադիմիր Իլյիչի կյանքի ու աշխատանքի մասին։ Հանձնարարություն ունենալով գնալ Օդեսա և գլխավորել բոլշևիկների գործունեությունը, Լալայանցը Դմիտրի Իլյիչից ստացավ ընդհատակում գործող վստահելի մարդկանց հասցեներ, կապեր հաստատելու համար։

Օդեսայում Բ. Լալայանցը Վորովսկու և Լևիցկու հետ միասին 1904 թ. սկզբներից ակտիվ աշխատանք է ծավալում Լենինից ստացած հանձնարարությունները կատարելու, բոլշևիկյան կոմիտեներ ստեղծելու, ՌՍԴԲԿ III համագումար հրավիրելու օգտին ագիտացիա կազմակերպելու ուղղությամբ։ Նա այցելում է Ուկրաինայի նահանգները, լինում է Ղրիմում։ 1904 թ. սկզբներին, Օդեսայի կոմիտեի հանձնարարությամբ, Լալայանցը նորից մեկնում է Շվեյցարիա, Լենինի մոտ, նրան զեկուցում հարավային նահանգներում բոլշևիկյան կոմիտեների գործունեության մասին[34]։ Վ. Ի. Լենինից ստանալով նոր առաջադրանքներ, Լալայանցը հաղթահարում է սահմանն անցնելու դժվարությունը և վտանգների միջով նորից վերադառնում Օդեսա։ Այդ շրջանում Ի. Խ. Լալայանցի համագործակցությունը Վ. Ի. Լենինի հետ և պայքարը կուսակցության լենինյան կազմակերպչական սկզբունքները պաշտպանելու և կենսագործելու համար հարուստ է բացառիկ հետաքրքիր իրադարձություններով, որոնք պետք է լուսաբանվեն առանձին։ Այստեղ կնշենք, որ վերադառնալով Շվեյցարիայից, Լալայանցը Վորովսկու և Լևիցկու հետ միասին կազմակերպում է Հարավային բոլշևիկյան կոմիտեների բյուրո, որը հանդիսանում էր Լենինի հենարանը ՌՍԴԲԿ III համագումար հրավիրելու և բոլշևիկյան տակտիկայի համար մղվող պայքարում։ Բյուրոյի քարտուղարն էր Պրասկովյա Լալայանցը։

1904 թ. հունիսին Օդեսայի պահնորդական բաժինը արդեն ճշտված էր համարում ՌՍԴԲԿ Օդեսայի կոմիտեի գործիչների ցուցակը և հասցեները։ Հունիսի 8-ի լույս 9-ի գիշերը ոստիկանությունը, հանկարծակի վրա հասնելով, ձերբակալեց Օդեսայի կոմիտեի անդամներին, որոնց թվում և «պարսկահպատակ» «Յակով Լեոնին», հայտնաբերեց կոմիտեի տպարանը, կնիքը, հրատարակությունների պահեստը[35]։ Օտարահպատակ Յակով Լեոնը շատ փորձեր կատարեց ազատվել կալանքից, քանի որ նրա բնակարանը խուզարկելիս «ոչինչ հանցավոր բան չէր գտնվել և պահնորդական բաժնի տվյալները նրա մասին չէին հաստատվում»[36]։ Օդեսայի դատական պալատի դատախազն արդեն պատրաստվում էր ազատ արձակել այդ «թափառական օտարերկրացուն»։

1905 թ. հունվարին, սակայն, Լեոնին բանտի գրասենյակ են կանչում, և ժանդարմը նրան է ներկայացնում իր իսկական լուսանկարը, անվանում իսկական անունով ու ազգանունով և ասում, որ նա 5 տարով Սիբիր աքսորի

33 Նույն տեղում, էջ 210։
34 ՀՌԿՊԱ, ֆ. 619/e, գ. 1651, թ. 28—29։
35 Օդեսայի մարզային պետարխիվ, ֆ. C34, ց. 1, գ. 138, թ. 1
36 Նույն տեղում, էջ 25։

դատապարտված «հանցագործն է»[37]։ Եվ ահա նորից նույն Օդեսայի բանտը, հետո էտապային ճանապարհորդություն։ Մոսկվա՝ «Բուտիրսկի» բանտը, հետո աքսոր Վոլոգդա՝ կրելու այն 5 տարվա աքսորը, որից փախել էր։

1905 թ. փետրվարին Լալայանցը Վոլոգդայում էր։ Հասնելով աքսորավայրը, նա վարակվում է տիֆով և մեկ ամիս մահամերձ վիճակում էր, ոստիկանական բժիշկների հսկողության տակ։

Ցարական ոստիկանները երկար չկարողացան նրան կաշկանդել։ 1905 թ ապրիլին, առողջանալուն պես, Լալայանցը փախչում է Վոլոգդյան աքսորից և գաղտնի ժամանում Պետերբուրգ։ Դա արդեն ՌՍԴԲԿ III համագումարից անմիջապես հետո էր։ Լենինի գլխավորությամբ բոլշևիկները նոր եռանդով պայքար էին ծավալել կուսակցության շարքերի համախմբման և սկսված հեղափոխությունը գլխավորելու համար։ Լալայանցն անմիջապես մտավ հեղափոխական գործունեության հորձանուտը մայրաքաղաքում։ Այդ շրջանում Ի. Խ. Լալայանցը նամակագրություն ուներ Կրուպսկայայի հետ, որի միջոցով Լենինին հաղորդում էր անհրաժեշտ ինֆորմացիա և ստանում ցուցումներ[38]։

Պետերբուրգ ժամանելուն պես Ի. Լալայանցը նշանակվեց ՌՍԴԲԿ Կենտկոմին կից պրոպագանդիստ։ Այդ մասին գրել է Կենտկոմում աշխատող Դելտան (Ե. Դ. Ստասովան) Պետերբուրգից հղած նամակներից մեկում[39]։ Մի քանի օր դրանից հետո Ն. Կրուպսկայան նամակ է գրում Ի. Խ. Լալայանցին հետևյալ բովանդակությամբ. «Թանկագին բարեկամ. ինչո՞ւ չեք գրում։ Մեզ գրել են, որ Դուք նշանակվել եք պատասխանատու պրոպագանդիստ։ Շատ խնդրում ենք Ձեզ, մանրամասն գրել Ձեր աշխատանքի մասին։ Դուք բսւր երևույթին կմեկնեք այցելության։ Անպայման գրեք Ձեր տպավորությունների մասին»[40]։ Այնուհետև Կրուպսկայան Լենինի անունից հանձնարարություններ է տալիս Լալայանցին՝ տեղերից իրենց հետ կապեր ստեղծելու մասին։

Վ. Ի. Լենինը դժգոհ էր, որ ՌՍԴԲԿ Կենտկոմը Լալայանցին նշանակել է միայն պրոպագանդիստ։ Կենտկոմի Ռուսական մասին գրած մի նամակում Կրուպսկայան հայտնում է. «Հղում ենք ջերմ ողջույն Կուրցին և Ինսարովին (Լալայանցին), սպասում ենք նրանցից նամակներ։ Յրեյր (Լենինը) առաջարկում է անմիջապես Ինսարովին վերցնել Կենտկոմի գործակալ»[41]։

Դրանից մի քանի օր հետո Վ. Ի. Լենինը նամակ է ուղարկում Կենտկոմին նրա ընդունած որոշումների և Կենտկոմի կազմում կատարվող լրացումների մասին։ Լենինը գրել է. «Թանկագին բարեկամներ։ Ձեր վերջին նամակների առթիվ պետք է ասեմ, որ համաձայն եմ բոլոր որոշումների հետ, բացի երկուսից։ 1) Մատրենային (Պ. Դ. Սմիդովիչին) գործակալ նշանակելու դեմ ես վճռականապես բողոքում եմ և թախանձանքով խնդրում եմ վերանայել... Ստանիսլավի (Ա. Վ. Սոկոլով) վերաբերյալ կխնդրեի հաղորդել ինձ, թե ո՞վ է նա, ինչ և ինչպե՞ս է։ Իսկ իմ կողմից, նույն կերպով երաշխավորում եմ գործակալ նշանակել Լալայանցին, որը Օդեսայում և հարավային բյուրոյում հանդես է բերել արտասովոր կազմակերպչական ընդունակություններ և բոլորի

37 Նույն տեղում, էջ 27։
38 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 18, ց. 17ն, գ. 1255, թ. 1—12 և այլ էջեր։
39 Նույն տեղում, ֆ. 26, ց. 21ն, գ. 19978, թ. 1։
40 Նույն տեղում, ֆ. 25, ց. 29ն, գ. 19999, թ. 1։
41 Նույն տեղում, ֆ. 25, ց. 21ն, գ. 19977, թ. 3։

կարծիքով սմանչելի է կազմակերպել կենդանի աշխատանքը: Նա տեղական ամբողջ աշխատանքի հոդին էր,— այսպես են ասում մի շարք օդեսացիներ, որոնք նույնիսկ բնավ էլ միշտ չեն համակրում «կարծրաքարներին»։ Վերջապես, նա վերին աստիճանի կայուն սկզբունքների մարդ է,... Ամուր սեղմում եմ ձեր ձեռքը՝ Ն. ԼԵՆԻՆ»[42]։

Կենտկոմը ընդունում է Վ. Ի. Լենինի առաջարկը։ Վ. Ի. Լենինի մոտ գնալով, Դելտան (Ստասովան) հայտնում է, որ Լալայանցը կոոպտացիայի է ենթարկվել Կենտկոմի կազմի մեջ։ Վ. Ի. Լենինը 1905 թ. հոկտեմբերի 3-ին Կենտկոմին գրած նամակում ընդգծում է, որ Լալայանցի և Լյուբիչի կոոպտացիան «ամբողջովին ողջունում է», որ դա «հավանորեն մեծապես կբարելավի գործը»[43]։

1905 թ. բուռն օրերն էին։ Լալայանցը, որպես բոլշևիկների Կենտկոմի անդամ, ոգևորված Լենինի մեծ վստահությամբ և բարձր գնահատականներով, մեկնեց Հարավ, կատարելու Լենինի հանձնարարությունները։

Ի. Խ. Լալայանցը մեկնեց Ղրիմ՝ նավաստիների զինված պայքարի ղեկավարմանը մասնակցելու և մասնավորապես Սևաստոպոլի կոմիտեին օգնելու համար։ «Ղրիմի կազմակերպությունը ձեռքից-ձեռք էր անցնում,— գրել է Ի. Լալայանցը,— նրա համար կատաղի պայքար էր գնում մենշևիկների դեմ»[44]։ Լալայանցը Սիմֆերոպոլում և Սևաստոպոլում այդ պայքարի գլխավորողներից մեկն էր։ Հին կոմունիստ Մ. Էսսենը, որ ականատես է եղել այդ դեպքերին, իր վերջին նամակներից մեկում գրել է. «Ընկեր Լալայանցը՝ հիանալի մի կազմակերպիչ, որը գերազանց կերպով գիտեր այդ հեղափոխական միջնաբերդի (Սևաստոպոլի) նշանակությունը, հաստատակամորեն Կենտկոմից օժանդակություն էր խնդրում՝ Սևաստոպոլի կոմիտեն գրավելու համար»[45]։

Հետագայում Ի. Լալայանցը մեծ բավականությամբ նշում է, թե «Սիմֆերոպոլը մերն է», «Սևաստոպոլը գրավված է»[46], ակնարկելով մենշևիկների պարտությունը և բոլշևիկ-լենինյանների հաջողությունը։

Այնուհետև Լալայանցը մեկնում է Անդրկովկաս։ Լալայանցի Անդրկովկաս գալու մասին մինչև այժմ գրականության մեջ ոչինչ հայտնի չէր։ Այդ փաստն ունի հատուկ կարևորություն։ Այդ օրերին Լալայանցի զինակից և կրակոտ հեղափոխական գործիչ Պրասկովյա Իվանովնան գրում է, որ Լալայանցը Կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ շրջագայում է Ռուսաստանի շատ քաղաքներ, որ նա «գործուղվում է Հարավային Ռուսաստան և Կովկաս»։ «Լալայանցը եղավ Բաքվում» և Անդրկովկասի այլ վայրերում — նշում է Կուլյաբկոն։

«Հիշում եմ,— գրում է Պրասկովյա Իվանովնան,— այդ ժամանակ Բաքվում և Անդրկովկասի այլ քաղաքներում ազգամիջյան արյունահեղ ընդհարումներ էին տեղի ունենում։ Այդ կապակցությամբ էլ Լալայանցը գնաց Անդրկովկաս»։

---

42 «Լենինյան ժողովածու», հատ. 5, էջ 479 (ընդգծում. իմն են—Ա. Մ.)։

43 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 395։

44 «Пролетарская революция», ամսագիր, 1930, № 4, էջ 124։

45 Էսսենի նամակը գտնվում է մեր տրամադրության տակ։

46 Տե՛ս «Революционное движение в Таврической губернии в 1905—1907», Крымиздат, 1955, էջ 9։

Լալայանցը Անդրկովկասում եղել է 1905 թ. ամռանը և աշնանը։ Ինքը, Լալայանցը գրել է. «Հարկ եղավ շրջագայել բոլշևիկյան կոմիտեները տեղում պրոպագանդայի դրվածքին ծանոթանալու և անհրաժեշտ հրահանգներ ու ցուցումներ տալու համար»[47]։

1905 թ. աշնանը նա վերադառնում է Պետերբուրգ։ Այստեղ էր վերադարձել Վ. Ի. Լենինը։ Նոյեմբերին ՌՍԴԲԿ Կենտկոմի վերակազմվելու և բոլշևիկներից ու մենշևիկներից կազմված միացյալ Կենտկոմ ստեղծելու կապակցությամբ Ի. Խ. Լալայանցը բոլշևիկների կենտրոնի կողմից մտցվեց Կենտկոմի անդամների կազմի մեջ։ Այսպիսով, 1905 թ. հեղափոխության վերելքի շրջանում ևս Լալայանցը, որպես Լենինի զինակից, ակտիվ կերպով գործում էր կուսակցության Կենտրոնական կոմիտեում, եռանդուն մասնակցություն ունենալով լենինյան կուսակցության կառուցման համար մղվող պայքարին։

1906 թ., որպես ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամ, «Լալայանցը շրջագայեց մի ամբողջ շարք կոմիտեներ և հրահանգավորեց նրանց կազմակերպական ու պրոպագանդիստական հարցերի շուրջը»[48]։ 1905 թ. վերջերին Լալայանցը մտցվեց ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեի կազմի մեջ։ 1906 թ. սկզբներին ՌՍԴԲԿ ռազմական կազմակերպության կոմիտեն գրեթե ամբողջովին ձերբակալվեց։ Վ. Ի. Լենինի առաջարկով Ի. Խ. Լալայանցի վրա պարտականություն դրվեց մասնակցել ռազմական կազմակերպության վերականգնմանը։ Ի. Լալայանցը մտցվեց ռազմական կազմակերպության կոմիտեի մեջ։ Կոմիտեն ձեռնամուխ եղավ ռազմական կազմակերպությունների համառուսական կոնֆերանսի նախապատրաստմանը։ Ստեղծվեց կազմակերպական կոմիտե, որի կազմի մեջ մտան Ի. Լալայանցը, Մ. Տրիսլերը, Դ. Գիմմերը։ Շուտով Մոսկվայից նրա մոտ եկավ նաև Ե. Ս. Յարոսլավսկին։ Ստանալով Լենինի նամակները և ցուցումները, կոմիտեն ակտիվացրեց ռազմական և մարտական կազմակերպությունների գործունեությունը։

1906 թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 5-ը Տամերֆորսում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ ռազմական կազմակերպությունների կոնֆերանսը։ Ի. Լալայանցը պատվիրակ էր ընտրվել Պետերբուրգի կոմիտեի կողմից։ Պատվիրակների թվում էին նաև Յարոսլավսկին, Զեմլյաչկան և ուրիշներ։

Կոնֆերանսի քննած գլխավոր հարցը զինված ապստամբության նախապատրաստման և անցկացման գործում ռազմական կազմակերպությունների դերի հարցն էր, նրանց գործունեության, ծրագրի հարցը։

«Լալայանցը,— գրել է Մարիա Ուլյանովան,— Դմիտրի Ուլյանովի և մի խումբ այլ բոլշևիկների հետ գործարար մասնակցություն ունեցավ ռազմական կազմակերպությունների համառուսական կոնֆերանսի նախապատրաստմանը և որպես պատվիրակ 1906 թ. վերջերին մեկնեց Տամերֆորս, հանդիսանալով զինված ապստամբության կազմակերպման գործում զինվորական կազմակերպությունների դերի մասին հիմնական զեկուցողներից մեկը»։

Վ. Ի. Լենինը հետևում էր այդ կոնֆերանսի աշխատանքներին։ Նա հատուկ հոդված է գրել «Ռազմա-մարտական կոնֆերանսի արձանագրությունների մասին», որի մեջ վերլուծել է կոնֆերանսի աշխատանքները, հատուկ կանգ առնելով Ի. Լալայանցի զեկուցման վրա։

47 ՀՄԿՊԱ, ֆ. 1651 ց., գործ 1651, թ. 28—29։
48 Տե՛ս «Правда» թերթը, 1933, № 197, 19 հուլիսի։

1906 թ. դեկտեմբերի 1-ին պահնորդական բաժնի տեղեկություններով ժանդարմերիան ձերբակալեց ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեին կից ռազմական կազմակերպության կոմիտեի ամբողջ կազմը, որի մեջ էր նաև Ֆրիդրիխ Կլենկին (Իսահակ Լալայանցը)։ Երկու տարի Լալայանցը տանջվեց բանտերում մինչև դատը։ 1908 թ. սեպտեմբերին Պետերբուրգի օկրուգի ռազմական դատարանը 102-րդ հոդվածով Ի. Խ. Լալայանցին դատապարտեց 6 տարի տաժանակրության Արևելյան Սիբիրում։

Վ. Ի. Լենինի զինակիցն ու մարտական ընկերը պոկվեց կուսակցական կոլեկտիվից և նետվեց Արևելյան Սիբիրի հեռավոր, խուլ անկյուններից մեկը՝ ժանդարմների հսկողության տակ։

Մոտ 10 տարի Լալայանցն ապրեց Իրկուտսկի նահանգում, սկզբում գրտնվելով բանտում, հետո տաժանակրության մեջ. ցարի անկումից հետո ֆիզիկապես հյուծված ու հիվանդ Լալայանցը բնակվում էր Իրկուտսկում։

Հոգեկան մղձավանջից նա ուշքի է գալիս և աշխատանքի անցնում Իրկուտսկի սպառողական կոոպերացիայի ցանցում՝ տնտեսագետի պաշտոնով, իր բազմանդամ ընտանիքի կարիքները բավարարելու համար։ Սիբիրում Լալայանցն ամուսնացել էր վերաբնակեցված ուկրաինուհու՝ Աննա Սաֆոնովայի հետ, որից ունեցել էր երեք երեխա։ Հինգ շնչից բաղկացած ընտանիքը պահելը աքսորական հիվանդ մարդու համար դժվարին բան էր։

1921 թ. Վ. Ի. Լենինը տեղեկանում է, որ Ի. Խ. Լալայանցը կենդանի է և ապրում է Արևելյան Սիբիրում և իսկույն նրան կանչում է Մոսկվա։

1922 թ. հունվարի 13-ին Լալայանցը գալիս է Մոսկվա։ Վերջապես նորից հանդիպում են վաղեմի ընկերները։

Վ. Ի. Լենինը երկու ժամ զրուցում է Լալայանցի կյանքի, վերապրածի և ընտանեկան վիճակի մասին։ Իլյիչը կարգադրություն է անում Լալայանցին բնակարան տրամադրելու, տեղավորելու, նյութապես ապահովելու մասին։ Լալայանցին բնակարան է տրվում «Նացիոնալ» հյուրանոցում, որտեղ ապրել էր ինքը՝ Լենինը։ Ի. Խ. Լալայանցը և նրա ընտանիքը, մասնավորապես տղաները՝ Վլադիմիրը, Լեոնիդը և աղջիկը՝ Վալենտինան, Վ. Ի. Լենինի և Ն. Կրուպսկայայի հաճախակի հյուրերն էին, որոնց հետ Իլյիչը զրուցում էր, կատակում։

Վ. Ի. Լենինի ցուցումով Ի. Խ. Լալայանցը աշխատանքի ուղարկվեց Ն. Կ. Կրուպսկայայի մոտ, գլխավոր Քաղլուսվարչությունում։

Վ. Ի. Լենինը մինչև իր կյանքի վերջը հոգատար էր Լալայանցի և նրա ընտանիքի նկատմամբ։

1933 թ. հուլիսին Ի. Խ. Լալայանցը վախճանվեց Մոսկվայում։ Հեղափոխական պայքարի ընկերները և Վ. Ի. Լենինի հարազատները «Պրավդա»-ում տպագրեցին մահախոսական, ուր ասված է. «Երկար տարիներ, սկսած 90-ական թթ. սկզբներից, Լալայանցը եղել է Լենինի զինակիցը և բարեկամը...»։

## ИСААК ЛАЛАЯНЦ

Доктор историч. наук А. Н. МНАЦАКАНЯН

(Р е з ю м е)

В статье освещается жизнь и революционная деятельность одного из старейших деятелей коммунистической партии Советского Союза, первого армянского марксиста-ленинца — Исаака Христофоровича Лалаянца (1870—1933).

И. Х. Лалаянц родился в Кизляре, начальное образование получил там же на родном армянском языке . Затем учился в Тифлисе и в Казанском реальном училище, где участвовал в марксистском кружке Федосеева. В 1889 г. вместе с Федосеевым он был арестован и выслан из Казани.

В 1893 г. Лалаянц отправляется в Самару. Здесь он знакомится с с В. И. Лениным и А. П. Скляренко, вместе с ними организует марксистский кружок «Самарской тройки». С этого периода Лалаянц становится ближайшим другом и соратником Ленина.

17 апреля 1900 г. Лалаянц был арестован, а в 1902 г. выслан в Балаганск (Сибирь). В июле он совершает побег, переходит границу и отправляется в Берлин, Цюрих, Женеву. В этот период он принимает активное участие в подготовке II съезда РСДРП, в издании газеты «Искра», участвует на II съезде заграничной лиги РСДРП.

В октябре 1903 г. В. И. Ленин направляет Лалаянца и других своих соратников в Россию. Вместе с Воровским и Левицким Лалаянц организует и возглавляет Одесский комитет большевиков, а затем и Бюро южных комитетов большевиков, развертывает большую работу по созыву III съезда партии. По предложению Ленина он входит также в состав объединенного ЦК РСДРП от большевистского центра.

В июле 1904 г. Лалаянц снова был арестован, а в феврале 1905 г. был сослан на 5 лет в Вологодскую губернию. Вскоре он совершает побег, нелегально поселяется в Петербурге, становится одним из руководителей питерской организации и кооптируется в состав большевистского ЦК РСДРП, избранного на III съезде партии. Отсюда в качестве представителя ЦК выезжал на юг России, побывал в Баку и Тифлисе, выступал против организаторов армянских погромов в Баку.

1 декабря 1906 г. Лалаянц еще раз был арестован и приговорен к 6 годам каторги. До февраля 1910 г. он находился в Шлиссельбургской крепости. В конце 1913 г. Лалаянц был отправлен на поселение в Восточную Сибирь. Вплоть до 1920 г. он проживал в Сибири.

В конце 1921 г. В. И. Ленин, узнав о судьбе своего старого друга, распорядился вывести Лалаянца с семьей в Москву. В последние годы своей жизни Лалаянц работал в Главполитпросвете.